

ՆԱՄԱԿ ԽԹԱԳՐՈՒԹՅԱՆԸ

ՊՐՈՖ. ՍԱԴԴ ՆԵՖԻՍԻ ԿՀԱՍՏԱՏԵ ՈՐ ԽԱՂՍՆԻՆ Է ՀԵՂԻՆԱԿԸ ՖՐԻԿԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՔԱՌՅԱԿԻՆ*

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» ամսագրի 1962 նոյեմբերի թիվին մեջ «ՖՐԻԿԸ ԽԱՔԱՆՈՒ ՔԱՌՅԱԿԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ» խորագրով՝ Ա. Հ. Շահումյարյան գրություն մը ունեն, որ ուրախացուց զիս և վստահ եմ ինձ նման ուրիշներ ալ, որոնք հետաքրքրված են Ֆրիկի Դիվանին մեջ երկվցած պարսկերեն բառյակին հարցով:

Շահումյարյան հաղորդած էր, թե իրեն հաջողեր է գտնել այդ բառյակը Էֆղալ ուղ-Դին ԽԱՂԱՆԻԻ (1107—1199) Քուլիաթի (ժողովածու) մեջ, հետևաբար՝ Շիրվան ծնած այդ մեծ բանաստեղծն է Ֆրիկի առաջ բերած պարսկերեն տողերուն հեղինակը: Հոգ չէ թե քիչ մը ուշ միայն բանի մը ամիս առաջ էր, որ բարեկամի մը բով տեսա «Տեղեկագիրի» այդ թիվը—կուզեմ իմ չերմ շնորհավորություններս հայտնել հարպելի Շահումյարյանին սույն նշանակալի հայտնաբերումին համար:

Ինքը թեև գովելի զգուշավորությամբ «եթև հաստա» է» ասած էր, ես կրնամ անվարան հայտարարել, թե որևէ տարակույս չկա, քանի որ Թևհրանի համալսարանի պարսկերեն գրականության ուսուցչապետ մեծահույժակ պրոֆ. Սա'իդ Նեֆիսի վերջերս ինձ գրած նամակով մը, պատասխանելով իմ հարցումիս՝ վճռականապես կհաստատուն, թե Ֆրիկի պարսկերեն բառյակին հեղինակը անպայման հաղանին է: Ահավասիկ պարագայները:

Երբ առաջին անգամ 1952-ին մեծ դժվարություններով հաջողեցա կարդալ շափազանց խաթարված այդ բառյակը՝ անընթեռնելի մնացած էին միայն երեք բառեր. ատոնք ալ, սակայն, տարի մը ետք 1953-ին կարելի եղավ ինձ բակել և ամբողջացնել իմաստը: Գրախոսականի մը մեջ, նվիրված հանգուցյալ Տիրայր Արբեկ-ի 1952-ին լույս ընծայած «ՖՐԻԿ ԴԻԻԱՆԻՆ» խոսած էի այս մանրամասնություններուն մասին: Այնուհետև հետամուտ եղա գտնելու բառյակին հեղինակը:

Գրեթե տարի մը առաջ գրադարանիս պարսկերեն գրքերուն մեջն պատահմամբ ձեռք առի կարդալու համար «Սոխենվերան-ը Խեան Դեհ Ասր-ը Հաղեհ» խորագրով գիրքը, Դեհլի տպված 1933-ին, հեղինակությամբ Կալկաթայի համալսարանի պարսկերեն լեզվի և գրականության

1 «Հայաստանի կոչնակ», Նյու-Յորք, 28 վնոսրվար, 1953:

* «Տեղեկագիր» 1962 թ. 11-րդ համարում տպագրվել է Ա. Շահումյարյանի «Ֆրիկը Խաթանու բառյակի թարգմանիչ» հոդվածը (էջ 85—87): Այնտեղ հաղորդվում է, որ 13-րդ դարի հուշակավոր հայ տաղերգու Ֆրիկի դիվանում եղած հայատառ պարսկերեն բառյակի հեղինակը Խաթանին է:

Ա. Շահումյարյանի այդ հոդվածը շարժել է գրականագետների հետաքրքրությունը, ոմանց մոտ տեղիք տվել թերահավատության: Այդ հոդվածի մասին Բ. Զուգասզյանն իր «Հայ-իրանական գրական առնչություններ» գրքում գրել է.

«Մեր սույն գիրքը տպագրության ընթացքում էր, երբ հրատարակվեց ընկ. Ա. Շահումյարյանի «Ֆրիկը Խաթանու բառյակի թարգմանիչ» խորագրով հոդվածը, որտեղ հաղորդում է արվում Խաթանու երկերի տպագրի մի ժողովածուի մեջ այս բառյակի գոյության մասին և շատ որոշակի հայտարարվում է, որ Խաթանին է բառյակի հեղինակը: Իհարկե փաստը ինքնին ուշագրավ է, բայց բանասիրության մեջ լուրջ մի փաստով չի կարելի վերջնականապես վճռել որևէ տեղեկագրություն, նամանավանդ բառյակի հեղինակի հարցը» (էջ 127):

Ա. Շահումյարյանի հոդվածը շարժել է նաև ամերիկահայ հեղինակավոր իրանագետ Մ. Թիրեբաբյանի հետաքրքրությունը: Տպագրում ենք նրա նամակը, ուղղված «Տեղեկագրի» խմբագրությանը: Խնդրում եմ:

պատմության ուսուցիչ՝ Մոհամմետ Իսհաղի Բացի տեղ մը տուր կխոսեր «Աշղի» գրչանունով նահատակված երիտասարդ բանաստեղծի մը մասին և որուն գերեզմանը այցելել է դեպի Թեհրան կատարած իր մեկ ճամբորդության ընթացքին: Տապանաքարին վրա փորագրված է եղեր նույն մեզի ծանոթ բառակը՝ որմն Ֆրիկը ներշնչված էր նոր Տազ մը հորինելու: Ահա՛ գրոշմված և յդ տողերը:

«Դար մասլախը Լշղ չոզ ներու բա նաբոշանդ
 Լազար սեֆեթան զեշտ խու բա նուրոշանդ
 Գար աշեղը սաղեղի զերոշուան մազրիզ
 Մորդար բովեզ հեր անչև ուրա նաբոշանդ»:

Գրքին հեղինակը ավելցուցած էր, թե այս բառակը Սերմետեն է, որուն գործը չունեի սակայն, ստուգելու համար: Դիմեցի Ռեզա Ղուլի Խանի սովոր հատորին՝ «Ալեմն» ու-ֆոսիմա» կոչված, որ կրովանդակն մինչև XVIII դարու կեսի Իրանի բոլոր գրագետներուն հակիրճ կենսագրականներն ու իրենց ստեղծագործություններու լավագույն նմուշները: Այնտեղ գտա հիշատակված Սերմետ Քաշանին, տալով իբր օրինակ անոր րոտիը բերթվածներեն՝ նույն վերի բառակը: Ուրեմն գտնված էր հեղինակը, գոր կփնտրեի, և հարցը լուծված համարեցի: Նկատելով որ Սերմետ ապրած էր XVII դարու սկիզբը, այսինքն Ֆրիկեն ավելի քան 300 տարի հետո, ի հարկն, Ֆրիկին անծանոթ էր այդպիսի բառակ, և հետևաբար հետագա դարերու գրչի մը բմածին հավելումն էր, ուստի և անոր հետևող Ֆրիկի Տազը իբրև հետամուտ՝ դուրս պետք էր ձգել: Այս եղավ իմ եզրակացությունս, որ հոգվածի մը նյութ ըբի՝ հրատարակելով «Լրաբեր» թերթին 1963 օգոստոս 1-ի թ.ին մեջ:

Հիրավի մեծ էր զարմանքս, երբ կարդացի Շահսուվարյանի հաղորդումը և շփոթեցա: Պետք է ճշտվեր՝ Սերմետն էր թե՛ հաղանին բուն հեղինակը բառակին: Դժբախտաբար հաշանին ամբողջական Դիվանը չունեի և ոչ էլ Նյու-Յորքի մատենադարանի արևելյան բաժնին մեջ կարելի եղավ գտնել:

Խորհեցա դիմել ուղղակի պարսիկ հեղինակավոր գրագետի մը, որ կարենար ստուգել խորհրդի և արդյունքը իմացնել ինձ: Հիշեցի Թեհրանի համալսարանի ուսուցչապետ պրոֆ. Սաֆի Նեֆիսի անունը, որուն գրություններն կարդացած ըլալով ժամանակին, տարակույս չունեի իր հմտության մասին՝ որպես պարսիկ գրականության տիրացած ականավոր անձնավորություն մը: Անմիջապես գրեցի իրեն ու բավական սպասելի հետո անցյալ օր ստացա իրմն հետևյալ պատասխանը, որ թարգմանությունն է պարսկերեն բնագրին.

Թեհրան, 21 Իսֆանդ ամիս, 1342

Սիրելի Պարոն,

Ձեր 21 Բեհմեն թվակիր նամակը երևի բացի քանզի այս վերջերս Իրանում չէի: Ինչ կը վերաբերի բառակին պոր գրած են Աշղիի գերեզմանին վրա Աղայն Մոհամմետ Իսհաղ Կալկաթայի համալսարանի ուսուցիչը անպատճառ սխալած է՝ և Հնդկաստանում սպանված տասնմեկերորդ դարու բանաստեղծ Սերմետ Քաշանիին չէ: Եվ ինչպես որ Երևանում պարբերականի մը մեջ գրած են Շիրվանցի Խաղանինն է. և բացի այն որ 1907-ին Հնդկաստանի Լեկնովում տպված Նուրիշվարի հրատարակության մեջ Խաղանիի քերթվածներուն մաս կկազմեն, Թեհրանի էմիրը Քլքիը գրավաճառառան տպագրած Խաղանիի Դիվանում 681-րդ էջին վրա սույն բառակը ևս տպված է և տարակույս չկա, որ Խաղանինն է:

Ով որ այն ուրիշի մը րեծայն անպայման սխալած է:

Հաջողություն կցանկամ պարսիկ գրականության մատուցած ձեր ծառայության:

(Ստորագրած) Սաֆի Նեֆիսի

Այսպես տերմն կճշտվի հարցը և կհաստատվի թե XII դարու մեծ բանաստեղծ Խաղանինն է հեղինակը Ֆրիկի բառակին. և տրամաբանական ալ էր երբ նկատենք, որ Խաղանիի մահին հազիվ հիսուն տարի անցած՝ երիտասարդ Ֆրիկի գուսանական տաղանդը սկսած էր ծաղկիլ, ու մեր երգիչը աներկբայապես գիտի, սլարսկերեն լեզուն, որ տարածված էր հայկական սահմաններու մեջ և ընդհանրապես ծանոթ էր մեր ժողովուրդին, բայց գիտեր նաև սլարսիկ նշանավոր բանաստեղծներուն րոտիը խոսքերը, կարդացած և կամ լսած ըլլալով: Այդ գեղեցիկ և իմաստալից քերթողական կտորներն մեկն էր նշանավոր գրողա՛ինս, որ հավա-

նարար շատ սիրված և ընդհանրապես էր արևելքի այդ մասին մեջ, Ֆրիկ թերևս գոց րրած էր զայն իբրև հիշելու արժանի վեհ խորհրդածություն:

Գրությունն սիակեկն առաջ կուգնի մի քանի գիտողություններ ընել:

ա. Շահումյանի կգրն թե թառայակի առաջին հրատարակիչները Մ. Մկրյանն ու Ե. Թոթոսյանը այն զետեղել են 1941 թվականին Երևանում լույս տեսած Ֆրիկի բանաստեղծությունների ժողովածուի 86-րդ էջում:

Սա ճիշտ է, սակայն մոռնալու չէր, որ առաջին անգամ հայատառ պարսկերեն այն տողերը Երևան քերողը Տիրայր արքեպ-ն էր, որուն ձեռագիրներն օգտված էին ժողովածուն կազմողները: Առաջին հրատարակիչներուն հետ գոնն պետք է հիշվեր Տիրայրի անունը, որ առաջինը եղավ հայ բանասիրության ծանոթացնելու Ֆրիկի տաղերում մեջ զետեղված քառյակին գոյությունը:

բ. Նույն հրատարակության մեջ «Կազմողների կողմից» եղած կարճ զեկույցում նկատելի են հետևյալ վրիպումները.

էջ 23—11րդ տող Mus-ը պետք է լինի Ms.

23—23 «մուգել»—ուղղել՝ «մատենագրարանի»

Անուշագրությանը քաց է թողված—հոգւելյան մատենագրարանի N 16 ձեռագիրը.

գ. Բ. Չուգասյանը «խոգավանդեգար» թարգմաններ է պարարիչ աստված, այդ անշուշտ ուղիղ է, սակայն «իշխանավոր», «մեծ մարդ», «քարձրապատիվ Տէր» իմաստով ալ կգործածվի և իր հիշած սլարագային «խոգավանդեգար» մեծ սկիզբ» այս վերջի նշանակությանը պետք է առնել:

դ. Իմ կարծիքով Շահումյանի ներկայացուցած «հաղանիի քառյակի առաջին տողի «մուլքի» բառը սխալ գրություն է, թե՛ տաղաչափության և թե՛ իմաստի տեսակետներ. ըստ իս նախընտրելի է Մոհամմես Իսհաղին տված քնադրին «մասլախ» բառը, որ «սպանդանոց» կնշանակե. նաև «հար» բառին տեղ չքողը» ավելի ճիշտ կգտնեմ: Կարծես «հաղանիի» զանազան սովագրությունները իրարու հետ բաղդատել և լավագույն քնագիրը ընտրել Ֆրիկյան քառյակին:

ՄԻՀԻԴԱՏ ԹԻՐԵԱՔՅԱՆ

Նյու-Յորք,

10 ապրիլ, 1964: